



Վանո Սիրադեղյան

Արածեք ձեր խոտը

Մարկեսը ասում է՝ «Բազմացե՛ք, կովեր, կյանքը կարճ է»: Հետևե՛ք իմաստունի խորհրդին, կերե՛ք ձեր խոտը, կշտացե՛ք ու բազմացե՛ք խելքից դուրս, բայց դուրս մի՛ եկե՛ք ձեր փարախի սահմաններից: Մի՛ մտե՛ք հայոց լեզվի տաճարը, մի՛ շփոթե՛ք այն ախոռի հետ:

Վայելե՛ք սիլոս ու «ախրանա», ման եկե՛ք՝ կոտոշներիդ ժապավեններ կապած, քարշ եկե՛ք արելեյան քաղաքների բազարներում եւ հաճույքով շնչե՛ք ձեր մանկության հոտը: Փարիզ ընկնելիս՝ անպայման մտե՛ք լիբանանյան ռեստորան ու պատվիրե՛ք քյաբաբ, որովհետեւ ձեր տեսած Եվրոպան սկսվել է Բաքվի նախադուրներից ու մեկընդմիշտ ավարտվել Աթենքի արվարձանների բանվորական ճաշարաններով: Անկաշկանդ որոճացե՛ք ձեր տխմար մտքերը աշխարհի համաժողովներում, դուք անխոցելի եք: Ոչ պատասխանատվություն է պետք, ոչ հողաբաշխ լեզու, ոչ առավել եւս՝ ուղեղ, որովհետեւ ամեն ինչի դեմ մի «սպանիչ փաստարկ» ունե՛ք, որ կրկնում եք անցյալ, ներկա ու ապագա ժամանակներով՝ «Բա որ մեզ մորթել են», «Բա որ մեզ մորթում են», «Բա որ հանկարծ մորթեն»... Իրոք, անասնական մտահոգություն: Կովի՝ ձեր հայրենասիրությամբ ձեր հայրենիքը պատկերացրե՛ք որպես անասհմա՛ն յոնջայի դաշտ եւ կախգլուխ արածելով՝ գնացե՛ք մինչեւ ռասս կգաք անդունդի: Կովեղեն ձեր թախիծով որոճացե՛ք կոմերիտական հորթանոցի ձեր հիշողությունները, ապա վերստին կերե՛ք, աղտոտե՛ք ու պառկե՛ք թրիքի մեջ, որովհետեւ ձեր իմացած տունն ու հայրենիքը այն է, որից պիտի անասնահոտը անպակաս լինի: Երբ ձեր չանեն հոգնի ծամելուց, ձգվե՛ք դեպի խոսափողները եւ մի մտահոգվե՛ք չորս ոտքի պատճառով, որովհետեւ եթե ձեզ բերել են այդտեղ, ուրեմն ինչ

աստիճանի պիտի իջեցված լինի խոսքի արժեքը: Բղավեք ու բառաչեք
անկաշկանդ, որովհետեւ ինչ ձայն էլ հանեք, դա կլինի ազգի, հայրենիքի,
Ժողովրդի եւ, իհարկեւ, «նվազագույն ախտոյի» մասին: Կովի՝ ձեր
անմոռնչութեամբ արածեք ձեր խոտը, կերեք ձեր սիւոսը մինչեւ տրաքվելը, իսկ
մնացածը տրորեք: Տրտինգ տվեք Հայաստանի կանաչ դաշտում, արեք ինչ անում
է անտեր յոնջայի արտը ընկած անտեր կովը, բայց մի մտեք մեր հայոց լեզվի
տաճարը, դա միակ բանն է, որ մնացել է մեզ, մնացած ամեն ինչը հարամել եք
անասունի պէս: